

Գործ ԳԴ/0023/01/10

ԴԱՏԱՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ

ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ա.

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. ՂԱԶ Ո

ՅԱՆ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԵՂԱԴՐՈՂ Ա. ԱՄԻՐԶԱԴՅԱՆԻ

ՊԱՇՏՊԱՆՆԵՐ

Մ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

Լ. ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՈՒԺՈՂԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՑՎՈՐԻ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

2011թ. ՓԵՏՐՎԱՐԻ 04-ԻՆ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ

Դռնբաց դատական նիստում քննեց գործն ըստ մեղադրանքի ԱՐՄԵՆ ՌՈԲԵՐՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ, ծնված 21.04.1974 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին չորս անձ, աշխատել է "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության

"Վարդենիս" մասնաճյուղի կառավարիչ, նախկինում չդատված, հաշվառված է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի 15-րդ շենքի 25-րդ բնակարանում, բնակվել է « Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Հ.Արզոյան փողոցի 14-րդ շենքի 25-րդ բնակարանում, արգելանքի տակ է 21.03.2010 թվականից:

Մեղադրվում է « քրեական օրենսգրքի179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190- րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որպիսի մեղադրանքներում իրեն մեղավոր չի ճանաչում:
ԽԱՉԱՏՈՒՐ ՌՈՒԲԵՆԻ ՇԱԲՈՅԱՆԻ, ծնված 02.01.1976 թվականին « Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում, ազգությամբ հայ, « քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին հինգ անձ, ֆիզիկապես վատառողջ, աշխատել է "Խաչատուր Շաբոյան" ԱՁ-ում, նախկինում չդատված, բնակվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Երիտասարդության փողոցի 10-րդ շենքի 3-րդ բնակարանում, արգելանքի տակ է 27.06.2010 թվականից:

Մեղադրվում է « քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որպիսի մեղադրանքներում իրեն մեղավոր է ճանաչում մասնակիորեն:

Դատական քննությամբ հաստատվեց հետևյալը.

Ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանը 2006-2008 թվականներին հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղի կառավարիչը, 2006-2008 թվականների ընթացքում, նախնական համաձայնության է եկել "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետ Հովհաննես Համբարձումյանի, "Խաչատուր Շաբոյան" Ա/Ձ-ի հիմնադիր–տնօրեն Խաչատուր Շաբոյանի և "Վասարաթ" ԱՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանի հետ՝ կեղծ վարկերի ձևակերպմամբ տրամադրված առանձնապես խոշոր չափերի գումարները կանխիկացման եղանակով յուրացնելու և դրանք օրինականացնելու վերաբերյալ: Նախնական համաձայնությունը ձեռք բերելուց հետո՝ Արմեն Բաղդասարյանը և Հովհաննես Համբարձումյանը 2006 թվականի հուլիսի 21-ից մինչև 2007 թվականի նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում, առանց մասնաճյուղի վարկառուների գիտության, նրանց անվամբ ձևակերպել են կենցաղային տեխնիկայի ձեռք բերման ապառիկ վարկ հատկացնելու թվով 198 կեղծ պայմանագրեր՝ 53.661.800 ՀՀ դրամ և 5.311 ԱՄՆ դոլար գումարի, ապա, հանցավոր ճանապարհով ստացված գումարների

իրական բնույթը, ծագումը, տնօրինման եղանակը թաքցնելու նպատակով, պայմանավորվածության համաձայն նույն ժամանակահատվածում, պարբերաբար փոխանցել են կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող,միևնույն մասնաճյուղի նախորդ հանդիսացող "Խս.Շաբոյան" Ա/Ձ-ի և "Վասարաթ" ՍՊ ընկերության հաշվեհամարներին: Գումարները փոխանցելուց հետո Խաչատուր Շաբոյանը և Հովիկ Խաչատրյանն իրենց հաշվեհամարներից ստացել են Արմեն Բաղդասարյանի և Հովհաննես Համբարձումյանի կողմից իրենց հաշվեհամարներին փոխանցված վերը նշված գումարներն ապօրինի կանխիկացրել են՝ իբր իրենց խանութներից ապառիկ կարգով վաճառել են կենցաղային տեխնիկա, որից հետո առձեռն ամբողջ գումարները փոխանցել են Արմեն Բաղդասարյանին և Հովհաննես Համբարձումյանին: Յուրացման եղանակով հափշտակված գումարներից մի մասով կատարել են վարկերի մարումներ իրենց կողմից կատարված հանցանքը չբացահայտելու համար, իսկ մնացած մասը տնօրինել և ծախսել են անձնական կարիքների համար: ՀՀ կենտրոնական բանկի մասնագետների կողմից "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղում իրականացված 2006-2008 թվականների ստուգման արդյունքներով հաշվետվության տեսքով կազմված բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող նպատակային ստուգման ակտի համաձայն՝ նշված կեղծ վարկերի պարտքերը չեն մարվել և 2010 թվականի մարտի 29-ի դրությամբ կազմել է ՀՀ 53.661.800 ՀՀ դրամից՝ 25.146.438 ՀՀ դրամ պարտք, տույժ-տուգանքները 22.991.977 ՀՀ դրամ, իսկ 5.311 ԱՄՆ դոլարից՝ 1.157 ԱՄՆ դոլար պարտք, տույժ-տուգանքները 1.544 ԱՄՆ դոլար:

Վերը շարադրված հանցավոր արարքները կատարելու համար ամբաստանյալներ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանին և Խաչատուր Ռուբենի Շաբոյանին մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

08.12.2010 թվականին Հովհաննես Գագիկի Համբարձումյանի նկատմամբ կայացվել է որոշում խափանման միջոցը փոխելու և հետախուզում հայտարարելու մասին: 22.12.2010 թվականին Հովհաննես Գագիկի Համբարձումյանի վերաբերյալ քրեական գործից մաս է անջատվել:

Առաջադրված մեղադրանքներում Արմեն Բաղդասարյանն իրեն մեղավոր չճանաչեց և օգտվելով իր իրավունքից հրաժարվեց ցուցմունք տալուց:

Ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ 2006 թվականի հունվար ամսից մինչև

2008 թվականի հունիս ամիսն աշխատել է "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղում, որպես կառավարիչ: Իր աշխատանքային պարտականությունների մեջ են մտել համապատասխան գործող կարգի քաղաքացիներին տրամադրել վարկեր, ներգրավել ավանդներ, սպասարկել հաճախորդներին, ղեկավարել մասնաճյուղի աշխատանքները և այլն: 2007 թվականի սկզբներին մասնաճյուղում անբարեխիղճ վարկառուների փոխարեն իր անձնական միջոցներով կատարել է վարկերի մարումներ նրանց փոխարեն, բացի այդ պարտքով ուրիշ քաղաքացիներից, ծանոթներից և բարեկամներից վերցրել է գումարներ անբարեխիղճ վարկառուների վարկերը մարելու համար: Անբարեխիղճ վարկառուների վարկերը մարելու նպատակով 2007 թվականի ընթացքում տարբեր քաղաքացիների անուններով բանկի հետ համագործակցող "Խս.Շաբոյան" Ա/Ձ-ի տնօրեն Խաչատուր Շաբոյանի և "Վասարաթ" ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Համբարձումյանի միջոցով ձևակերպել է կենցաղային վարկեր կենցաղային ապրանք վերցնելու փոխարեն, ստացել է այդ վարկերի գումարները և կատարել խնդրահարույց վարկերի մարումներ, ընդ որում քաղաքացիները, որոնց անվամբ ձևակերպել է վարկեր, տեղյակ չեն եղել այդ մասին, որ իրենց անվամբ ձևակերպվել է վարկ: "Խաչատուր Շաբոյան" Ա/Ձ-ի տնօրեն Խաչատուր Շաբոյանը և "Վասարաթ" ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Համբարձումյանը գնացել են անօրինականությունների իր խնդրանքով, ապրանքների փոխարեն իրեն տվել ապրանքների գումարները: Անօրինական վարկեր է ձևակերպվել մոտ 106 քաղաքացիների անվամբ մեկ տարվա ընթացքում, իսկ դրանցով յուրացված գումարը չի գերազանցել 30.000.000 « դրամը, որի մնացորդը 11.02.2010 թվականի դրությամբ կազմել է 14.092.001 « դրամ: Իր կողմից ձևակերպված անօրինական վարկերից մոտ 27.000.000 « դրամն ամբողջությամբ ուղղվել է իր վերցրած անօրինական վարկերի մարումների համար, իսկ մյուս մասը եղած խնդրահարույց վարկերի տոկոսների և տույժ-տուգանքի մարման համար: Հայտնել է, որ իր կատարած անօրինականությունների մասին տեղյակ է եղել մասնաճյուղի վարկային մասնագետ Հովհաննես Համբարձումյանը, որն անձամբ պատրաստել է այդ գործերը, ձևակերպել կենցաղային վարկեր: Անօրինական վարկերը ձևակերպելու համար օգտագործել են նախկինում մասնաճյուղում մարված վարկային գործերում առկա փաստաթղթերը, նրանցից վերցնելով համապատասխան փաստաթղթեր և ձևակերպել նոր վարկեր, որոնց հիման վրա ինքը գրել է հաշվապահական կարգադրություն գումարները նշված կազմակերպությունների հաշվեհամարներին փոխանցելու վերաբերյալ:

Վարկառուների փոխարեն վարկի ստացման փաստաթղթերում ստորագրել է ինքը և գումարները փոխանցվել "Վասարաթ" ՍՊ ընկերության և "Խաչատուր Շաբոյան" Ա/Ձ-ի հաշվեհամարներին, որոնց տնօրենները գումարները ստանալուց հետո ամբողջությամբ փոխանցել են իրեն, որոնք ինքը տնօրինել է, առանց քաղաքացիների գիտության: Տարբեր քաղաքացիների անուններով անօրեն վարկեր է ձևակերպել և վարկառուների փոխարեն մարումներ կատարել, որպեսզի մասնաճյուղի ցուցանիշները բարձր լիներ և մասնաճյուղի անձնակազմը կարողանար պարգևատրումներ ստանալ:

Դատաքննության ընթացքում ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանը հայտնեց, որ կատարված կեղծ գործարքների մասին ինքն ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանին չի հայտնել, նրան կեղծ գործարքներից որևէ գումար չի տվել: Հայտնեց նաև, որ չի ընդունում քաղաքացիական հայցի պահանջը (հատոր 1-ին՝ գ. թ. 10-11, 39-40, 45-46, 58-59, 62-64, 66, 116-117, 126-128, 130; հատոր 2-րդ՝ գ. թ. 29-32, 165; հատոր 3-րդ՝ գ. թ. 237-240, 242 և դատական նիստի արձանագրություն):

Առաջադրված մեղադրանքներում Հովհաննես Համբարձումյանն իրեն մեղավոր չճանաչեց և օգտվելով իր իրավունքի հրաժարվեց ցուցմունք տալուց, ինչպես նաև որևիցե հարցի պատասխանելուց (հատոր 1-ին՝ գ. թ. 12-13, 47-48, 53-57, 73-74, 78, հատոր 2-րդ՝ գ. թ. 28, հատոր 3-րդ՝ գ. թ. 245-146, 248-249, 251 և դատական նիստի արձանագրություն):

Առաջադրված մեղադրանքներում Խաչատուր Շաբոյանն իրեն մեղավոր ճանաչեց մասնակիորեն և ցուցմունք տվեց այն մասին, որ հանդիսացել է անհատ ձեռնարկատեր, զբաղվել է կենցաղային տեխնիկայի առուվաճառքով: Եղել է "Ադշինինվեստ" բանկի Վարդենիսի մասնաճյուղում հաճախորդ և համագործակցել է բանկի հետ: 2007 թվականի ընթացքում իրեն կանչել է մասնաճյուղի կառավարիչ Արմեն Բաղդասարյանը և խնդրել է օգնել բանկին նշելով, որ բանկի ցուցանիշները պահելու համար բանկի խնդրահարույց վարկերը անբարեխիղճ վարկառուների փոխարեն շտապ մարելու համար իր հաշվին գումար է փոխանցված, որպեսզի ինքը ստանա այդ գումարները և վերադարձնի իրենց: Ինքը կատարել է նրա խնդրանքը, ստացել է այդ գումարները և ամբողջովին, լրիվ, անմիջապես իրեն որևէ լումա չպահելով բոլորը տվել է Արմեն Բաղդասարյանին և Հովհաննես Համբարձումյանին, առանց հասկանալու և գիտակցելու այդ գումարների ծագումը, բնույթը և նշանակությունը: Այսինքն, իրեն ընդամենը խնդրել է ստանալ նշված գումարներ: Ինքը չի իմացել, որ նրանք այդ գումարները պետք է յուրացնեն: Նշեց նաև, որ մեղքը մասնակի է ընդունում միայն, որ գումարը

ստացել է և վերադարձրել է կանխիկ բանկին՝ օժանդակել է: Հայտնեց, որ իր սխալը եղել է այն, որ ինքը գումարը ստացել և վերադարձրել է կառավարիչին: Ինքը որևէ հանցավոր համաձայնություն չի ունեցել, իր համաձայնությունը եղել է միայն բանկի գումարը կանխիկացնելու և վերադարձնելու, գումարերը բանկին, այլ ոչ թե նախապես պայմանավորվածության է ձեռք բերել կեղծ վարկերի ձևակերպմամբ, այդ գումարները յուրացման եղանակով հափշտակելու և ստացված եկամուտները օրինականացնելու համար: Ինքը որևէ գումար չի հափշտակել, իրենը չի դարձրել, բանկի աշխատակից չի եղել: Իր գործողությունները չունեն որևէ շահադիտական բնույթ: Ինքը ստացել է գումարները և ամբողջությամբ, տեղում հանձնել է բանկի կառավարչին: Նշեց նաև, որ ինքը բանկի աշխատող չի եղել ինքը հանդիսացել է բանկի հազարավոր հաճախորդներից մեկը և չէր կարող իմանալ և չէր իմացել այդ գումարների ծագումը, բնույթը, նշանակությունը, որը մինչև անգամ չեն իմացել բանկի մյուս աշխատակիցները, իսկ ինքը, որպես հաճախորդը որտեղից պետք է իմանար: Հայտնեց նաև, որ չի ընդունում քաղաքացիական հայցի պահանջը (հատոր 1-ին գ. թ. 93-97, 107; հատոր 2-րդ գ. թ. 11, 17, 18-19, 22-23, 26, 184; հատոր 3-րդ գ. թ. 231-234, 236 և դատական նիստի արձանագրություն):

Արմեն Բաղդասարյանի և Խաչատուր Շաբոյանի, ըստ էության, ինքնախոստովանական ցուցմունքներից բացի, նրանց հանցանքները հաստատվում են նաև հետևյալ ապացույցներով.
Տուժողի և քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչ Տիգրան Խաչատրյանի ցուցմունքով այն մասին, որ ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանը հանդիսանալով "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղի կառավարիչը, 2006 թվականի հունվարից մինչև 2008 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում, նախնական համաձայնության է եկել նույն մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետ Հովհաննես Համբարձումյանի, "Խաչատուր Շաբոյան" Ա/Ձ-ի տնօրեն Խաչատուր Շաբոյանի և "Վասարաթ" ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանի հետ կեղծ վարկերի ձևակերպմամբ առանձնապես խոշոր չափերի գումար կանխիկացնելու միջոցով յուրացնելու շուրջ:

Նախնական համաձայնության գալուց հետո 2006 թվականի հուլիսի 21-ից մինչև 2007 թվականի նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում, առանց մասնաճյուղի վարկառուների գիտության, Արմեն Բաղդասարյանը և Հովհաննես Համբարձումյանը ձևակերպել են թվով 198 կեղծ վարկային պայմանագիր, որոնց հիման վրա "Խաչատուր Շաբոյան" Ա/Ձ-ի տնօրեն Խաչատուր Շաբոյանը և "Վասարաթ" ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ

Խաչատրյանը "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղից ստացել են 53.661.800 ՀՀ դրամ և 5.311 ԱՄՆ դոլար գումար՝ ներկայացնելով նշված գումարներն իրենց տնօրինման տակ գտնվող խանութներում, որպես ապառիկ կարգով վաճառված կենցաղային տեխնիկայի դիմաց վճարված գումար: Այնուհետև, Խաչատուր Շաբոյանի և Հովիկ Խաչատրյանի կողմից կանխիկացված վերը նշված գումարներն առձեռն փոխանցվել են Արմեն Բաղդասարյանին և Հովհաննես Համբարձումյանին, որոնք նպատակ ունենալով թաքցնել հափշտակության փաստերը և խուսափել պատասխանատվությունից, ստացված գումարների որոշ մասով կատարել են կեղծ վարկերի մարումներ, իսկ մնացած մասն օգտագործել են անձնական կարիքների համար:

Քրեական գործով տուժող և քաղաքացիական հայցվոր ճանաչված "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերությունը կատարված հանցագործությամբ պատճառված վնասը բռնագանձելու պահանջով հայցադիմում է ներկայացրեց դատարան և խնդրել է.

1.Ամբաստանյալներ Արմեն Բաղդասարյանից, Հովհաննես Համբարձումյանից,Խաչատուր Շաբոյանից և Հովիկ Խաչատրյանից համապարտության կարգով հօգուտ քաղաքացիական հայցվոր "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության բռնագանձել 50.593.545 ՀՀ դրամ:

2. "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերությանը պատճառված 25.146.438 ՀՀ դրամ, ինչպես նաև 1.157 ԱՄՆ դոլար (1 ԱՄՆ դոլարը = 384,65 ՀՀ դրամ՝ առ 26.02.2010թ.) հիմնական վնասին, սկսած 29.03.2010 թվականից մինչև վնասն ամբողջությամբ հատուցելու (պարտավորությունը դադարելու) օրը, հաշվեգրել և բռնագանձել տոկոսներ՝ պայմանագրերով նախատեսած պայմաններով:

3. Բռնագանձումը տարածել մեղադրյալներ Արմեն Բաղդասարյանին, Հովհաննես Համբարձումյանին, Խաչատուր Շաբոյանին և Հովիկ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա (հատոր 2-րդ գ. թ. 34-36, 43-45, 49-51, 59-61, 7577, 84-86, 90-93, 105-107, 108- 110, 111-113, 117-119, 129-131, 132-134, 138-140, 144-146, 150-152, 153-155, 156-158, 166-168, 172-174, 175-177, 185-187, 188-190, 191-193, 201-203, 204-206, 207-209, 219-221, 222-224, 225-227, 231-233, 234-236, 237-239, 240-242, 246248, 249- 251; հատոր 3-րդ գ. թ. 7-9,

10-12, 16-18, 19-21, 34-36, 37-39, 40-42, 43-45, 4951, 52- 54, 55-57, 58-60, 79-81, 82-84, 85-87, 91-93 և դատական նիստի): Վկաներ Հարություն Չեպեչյանի, Լուսինե Մինասյանի, Անահիտ Սարգսյանի, Խաչատուր Մանուկյանի, Հայկ Մադոյանի, Սամվել Մինասյանի, Ալլա Գրիգորյանի և Արտակ Ղարիբյանի ցուցմունքներով այն մասին, որ "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղում, որևիցե վարկ չեն ձևակերպել, սակայն նշված բանկում գրավադրել են իրենց ոսկյա զարդերը, որոնք էլ ստացված գումարը մարելուց հետո հետ են ստացել բանկից, իսկ ինչ վերաբերում է իրենց անուններով "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղում կենցաղային տեխնիկա գնելու նպատակով վարկեր ձևակերպված լինելու, այդ մասին տեղեկացել են նախաքննության ընթացքում հարցաքննության ժամանակ (հատոր 2-րդ գ. թ. 62-64, 6567, 123-125, 126-128, 228-230; հատոր 3-րդ գ. թ. 13-15, 28-30, 64-66 և դատական նիստի արձանագրություն):

Վկաներ Գարիկ Գրիգորյանի, Գագիկ Բարսեղյանի, Կարեն Աղաբեկյանի, Սվետիկ Ամյանի, Ռայա Ավանեսյանի, Արկադի Նարինյանի, Նաիրա Մկրտչյանի, Ատոմ Ղարիբյանի, Հայկ Արշակյանի, Արման Համբարձումյանի, Ռուբեն Հովհաննյանի, Հարություն Ազարյանի, Նաիրա Ազարյանի, Արարատ Երիցյանի, Կարինե Միրզոյանի, Քրիստինե Պետրոսյանի, Մելանյա Պետրոսյանի, Հասմիկ Խաչատրյանի, Աղունիկ Նալբանդյանի, Էմմա Հակոբյանի, Լենդրուշ Ղարիբյանի, Աավուրիկ Ղարիբյանի, Վահագն Նալբանդյանի, Արփիկ Եղեյանի, Տաթևիկ Պետրոսյանի, Սմբատ Հակոբյանի, Աղաբեկ Սարգսյանի, Նելսոն Կոլոտյանի, Անահիտ Համբարձումյանի, Գրիգոր Սահակյանի, Սաթենիկ Շաբոյանի, Ստելլա Մկրտչյանի, էդգար Մինասյանի, Արմինե Շաբոյանի, Ռաֆյել Գրիգորյանի, Գրետա Հովհաննյանի, Եվգենիա Մելքումովայի, Կարինե Ախոյանի, Թամարա Ղարիբյանի, Ռուզաննա Մամիկոնյանի, Անահիտ Սևոյանի, Գևորգի Օսիպովայի և Գեղեցիկ Հակոբյանի ցուցմունքներով այն մասին, որ "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղի, ինչպես նաև այլ բանկերի հետ որևիցե գործարք չեն կատարել և տեղյակ չեն եղել, որ իրենց անուններով "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղում վարկեր են ձևակերպված կենցաղային տեխնիկա գնելու նպատակով (հատոր 2-րդ գ. թ. 37-39, 4042, 46-48, 52-53, 54-55, 56-58, 68-70, 71-74, 78-80, 81-83, 17-89, 94-96, 97-98, 99-101, 102-104, 114-116, 120-122, 135-137, 141-143, 147-149, 159-161, 162-164, 169-171, 178-180, 181-183, 194-197, 98-200, 210-212, 213-215, 16-218, 243-245; հատոր 3-րդ գ. թ. 1-3,

4-6, 22-24, 25-27, 31-33, 46-48, 61-63, 67-69, 70-72, 73-75, 76-78, 88-90 և դատական նիստի արձանագրություն):
Վկա Անահիտ Շհոյանի ցուցմունքով այն մասին, որ 2003 թվականից աշխատում է "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղում, որպես գլխավոր հաշվապահ և իր աշխատանքային պարտականությունների մեջ են մտնում մասնաճյուղի հաշվապահական հաշվառման վարումը, հաշվետվությունների և աշխատավարձերի կազմումը ու վճարումը, հիմնական միջոցների և արագաշարժ առարկաների հաշվառումը, դրամարկղի փակումը բոլոր պատասխանատու անձանց հետ: Վարկային գործերն ինքն անձամբ չի ձևակերպում և չի տեսնում, թե ինչ փաստաթղթեր է վարկային գործում լինում: Բոլոր վարկային գործերը կազմվում են վարկային բաժնի մասնագետները և նրանց կողմից կազմվում է դրական կամ բացասական եզրակացություն վարկը տրամադրելու վերաբերյալ: Դրական եզրակացության ժամանակ վարկային մասնագետը կազմում է հաշվապահական կարգադրություն, վարկի ձևակերպման վերաբերյալ և այն ստորագրում է կառավարիչի հետ միասին: Հաշվապահական կարգադրությունն ստորագրված փոխանցվում է իրեն, որի հիման վրա հաշվապահության մասնագետները բացում են հաշիվ, ձևակերպում վարկ և գումարը փոխանցում բանկի հետ համագործակցող կազմակերպության հաշվին: Գումարը փոխանցելուց հետո համագործակցող ընկերությունն իր դրամական չեկով մոտենում է հաշվապահության մասնագետին, դուրս գրում գումարը, որից հետո դրամարկղից ստանում է կանխիկ գումարը: Արմեն Բաղդասարյանի և Հովհաննես Համբարձումյանի կողմից կատարված կեղծիքների մասին տեղեկացել է վերջին ժամանակաշրջանում, երբ "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության վարչության անվտանգության բաժնի աշխատակիցները կատարել են ստուգումներ և հայտնաբերել նրանց կողմից կեղծված վարկային գործերն ու այդ մասին հայտնել իրավապահ մարմիններին (հատոր 3-րդ գ. թ. 252-253 և դատական նիստի արձանագրություն): Իրեղեն ապացույց ճանաչված "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերությունից վարչության նախագահ Ն.Կարամանուկյանից ստացված 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 05418 հանցագործության մասին հաղորդմամբ, ըստ որի "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղում կատարված ծառայողական քննության արդյունքներով պարզվել է, որ մասնաճյուղի Նախկին կառավարիչ Արմեն Բաղդասարյանը և վարկային նախկին մասնագետ Հովհաննես Համբարձումյանի 2006-2007 թվականների ընթացքում, կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ առանց մասնաճյուղի վարկառուների գիտության նրանց անվամբ վարկային

փաստաթղթերով ձևակերպել են վարկ հատկացնելու վերաբերյալ 396 պայմանագրեր և ստացված 95.788.080 ՀՀ դրամ ու 27.616 ԱՄՆ դոլար գումարները մասնաճյուղի հետ համագործակցող "Խաչատուր Շաբոյան" ԱՁ-ի և "Վասարաթ" ՍՊ ընկերության օժանդակությամբ հափշտակել են (հատոր 1-ին գ. թ. 2-3, 7-13): 2010 թվականի մայիսի 6-ից մինչև մայիսի 16-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Կենտրոնական բանկի մասնագետների կողմից "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղում իրականացված 2006-2008 թվականների ստուգման արդյունքներով հաշվետվության տեսքով կազմված բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող նպատակային ստուգման ակտի համաձայն թվով 198 կեղծ վարկերի պարտքերը չեն մարվել և 2010 թվականի մարտի 29-ի դրությամբ կազմել է 53.661.800 ՀՀ դրամից 25.146.438 ՀՀ դրամ պարտք, տույժ– տուգանքները 22.991.977 ՀՀ դրամ, իսկ 5.311 ԱՄՆ դոլարից 1.157 ԱՄՆ դոլար պարտք, տույժ-տուգանքները 1.544 ԱՄՆ դոլար:
Գագիկ Բարսեղյանի, Անահիտ Բարսեղյանի, Նունե Բարսեղյանի, Կարո Բուդոյանի, Ալվարդ Բեժանյանի, Արշակ Դաբաոյանի, Մայախանմ Դարբինյանի, Հովիկ Դավթյանի, Սարգիս Դավթյանի, Արման Դաշյանի, Գեորգի Դուլյանի, Ալբերտ Գառնարատյանի, Գրիմիկ Գասպարյանի, Հովհաննես Գասպարյանի, Արմեն Գալստյանի, Աշոտ Գալեչյանի, Ալլա Գրիգորյանի, Ալետա Գրիգորյանի, Հմայակ Գրիգորյանի, Դաֆայել Գրիգորյանի, Աշոտ Գևորգյանի, Վասիլի Գյուլումյանի, Դուզաննա Աբգարյանի, Նառա Աբգարյանի, Աստղիկ Աբրահամյանի, Հարություն Ազարյանի, Նաիրա Ազարյյանի, Ստեփան Արզոյանի, Հայկ Արշակյանի, Ահարոն Ալբերտյանի, Ալլա Ալոյանի, Արմեն Ալլահվերդյանի, Դաֆիկ Ավագյանի, Դայա Ավանեսյանի, Թամարա Ավետիսյանի, Սուրիկ Ավետիսյանի, Կարեն Աղաբեկյանի, Արմեն Աղաջանյանի, Անյուտա Աղաջանյանի, Գայանե Ափիցարյանի, Սվետիկ Ամյանի, Սարգիս Անտոնյանի, Վարուժան Թադևոսյանի, Վարուժան ԹադԷտսյանի, Հասմիկ Թարխանյանի, Արթուր Չոբանյանի, Մխիթար Թովմասյանի, Վարդանուշ Թումանյանի, Լենա Ջումանյանի, Գագիկ Պռոշյանի, Հարություն Չեպեչյանի, Սառա Պետրոսյանի, Տաթևիկ Պետրոսյանի, Մակիչ Պետրոսյանի, Քրիստինե Պետրոսյանի, Մելանյա Պետրոսյանի, Նորա Պետրոսյանի, Մրամ Հարությունյանի, Ռաֆայել Հարությունյանի, Սոս Հարությունյանի, Սոնյա Հովակիմյանի, էմմա Հակոբյանի, Ալինա Հակոբյանի, Հենրիկ Հակոբյանի, Սուսաննա Հակոբյանի, Սմբատ Հակոբյանի, Ծովինար Հակոբյանի, էլիզա Համբարձումյանի, Արտակ Համբարձումյանի, Արման Համբարձումյանի, Անահիտ Համբարձումյանի, Անուշ Համբարձումյանի, Հակոբ Հոխանյանի, Աննա Հովհաննյանի, Ռուբեն

Հովհաննիսյանի, Միխայիլ Հովհաննես) ան ի, Ալեքսան Հունանյանի, Արմեն Խաչատրյանի, Հասմիկ Խաչատրյանի, Ռազմիկ Խաչատրյանի, Գևորգ Սարգսյանի, Աղաբեկ Սարգսյանի, Անահիտ Սարգսյանի, Հայկարամ Սարգսյանի, Հրանտ Սարգսյանի, Նելլի Սարգսյանի, Գրիգոր Սահակյանի, էդվարդ Սահակյանի, էդվարդ Սահակյանի, Արթուր Սահակյանի, Արտեմ Սահակյանի, Արմանուշ Սահակյանի, Սարգիս Սահակյանի, Մարտին Սահակյանի, Ռազմիկ Սամվելյանի, Ֆրիդոն Սաֆարյանի, Արշալույս Սիմոնյանի, Արաքսյա Սողոմոնյանի, Գոհար Խլոյանի, Սեդրակ Խլոյանի, Անահիտ Սևոյանի, Համլետ Վարդանյանի, Սևակ Վարդանյանի, Կարեն Վարդանյանի, Գագիկ Կարապետյանի, Գառնիկ Կարապետյանի, Գևորգ Կարապետյանի, Սևակ Կարապետյանի, Սամվել Կարճիկյանի, Նվեր Կոլոտյանի, Նելսոն Կոլոտյանի, Գոռ Տոնոյանի, Արմենուհի Տերյանի, Վլադիմիր Տերյանի, Հայկ Մադոյանի, Գայանե Ղազարյանի, Զենֆերա Ղարիբյանի, Արտակ Ղարիբյանի, Ատոմ Ղարիբյանի, Թամարա Ղարիբյանի, Աավուրիկ Ղարիբյանի, Սոխակ Ղարիբյանի, Ռուբեն Ղարիբյանի, Աենդրուշ Ղարիբյանի, Վերգինե Ղարիբյանի, Միեր Ղարիբյանի, Նինա Ղարիբյանի, Անուշ Մարտիրոսյանի, Հովիկ Մանուկյանի, Գայանե Մանուկյանի, Արսեն Մանուկյանի, Արամ Միրզոյանի, Կարինե Միրզոյանի, Ռազմիկ Միսակյանի, Զարիկ Մինասյանի, էդգար Մինասյանի, Արծրուն Մինասյանի, Արեգնազ Մինասյանի, Սամվել Սինասյանի, Լուսինե Մինասյանի, Մանվել Մինասյանի, Շահում Մինասյանի, Քնարիկ Մովսիսյանի, Արթուր Մովսիսյանի, Գեղեցիկ Մուրադյանի, Աևոն Երանոսյանի, Նարինե Երանոսյանի, Կարինե Ախոյանի, Վիկտոր Մխեյանի, Արմինե Մկրտչյանի, Սամվել Մկրտչյանի, Ստելլա Մկրտչյանի, Վարդուշ Մկրտչյանի, Նաիրա Մկրտչյանի, Սպարտակ Մելիքյանի, Սվետա Մելիքյանի, Աևոն Մելիքյանի, Եվգենիա Մելքումովայի, Միխաիլ ՄԵլքումովինի, Սամվել Մնացականյանի, Արամի Մնացյանի, Արմինե Շաբոյանի, Իշխանուհի Շաբոյանի, Վահե Շաբոյանի, Գոհարիկ Շիրվանյանի, Արթուր Շելունցի, ժորա Նազարյանի, Արկադի Նարինյանի, Աղունիկ Նալբանդյանի, Վահագն Նալբանդյանի, Մարիամ Օհանյանի և Գեորգի Օսիպովի անուններով ձևակերպված վարկային գործերում բացակայում են հետևյալ փաստաթղթերը՝

ապրանք ձեռք բերելու համար տեղեկանք լրացված համագործակցող կազմակերպության կողմից,

սպառողական վարկի ստացման Դիմում-Հայտ,

անձնագիր, առկայության դեպքում՝ սոցիալական քարտի պատճեն,

տեղեկանք գրանցման հաշվառման վերաբերյալ՝ տրված իրավասու մարմնի (տեղական ինքնակառավարման մարմին, ԲՇՏ, Համատիրություն, Լիազոր ներկայացուցիչ և այլն) կողմից,

տեղեկություններ վարկառուի և ընտանիքի անդամների եկամուտների վերաբերյալ,

վարկերի տրամադրման վերաբերյալ եզրակացությունները, որոնք պետք է կազմվեն "Վարդենիս" մասնաճյուղի վարկային մասնագետի կողմից,

վարկերի տրամադրման վերաբերյալ "Վարդենիս" մասնաճյուղի վարկային կոմիտեի գրավոր որոշումները,

վարկային և գրավի պայմանագրերը,

ապրանքի հանձնումը-ընդունումը հաստատող փաստաթղթերը,

սպառողական վարկերի տրամադրման վերաբերյալ Վարկային բաժնին ուղղված գրավոր կարգադրությունները տրված "Վարդենիս" մասնաճյուղի կառավարչի կողմից: Այդուհանդերձ, "Վարդենիս" մասնաճյուղում առկա են "Վարդենիս" մասնաճյուղի հաշվապահությանը տրված վարկի տրամադրման վերաբերյալ գրավոր կարգադրությունները, որոնց վրա դրված են "Վարդենիս" մասնաճյուղի նախկին կառավարիչ Արմեն Բաղդասարյանի և վարկային մասնագետ Հովհաննես Համբարձումյանի ստորագրությունները, որոնց հիման վրա "Վարդենիս" մասնաճյուղի հաշվապահության կողմից գումարները փոխանցվել են "Վասարաթ" ՍՊ ընկերության և "Խաչատուր Շաբոյան" Ա/Ձ-ի հաշվեհամարներին:

Վերը նշված անձանց անուններով կազմված վարկերի մասով ստուգող խմբի մասնագիտական կարծիքով այն մասին, որ հիմք ընդունելով հաշվետվության մեջ նկարագրված իրավական ակտերի չպահպանման դեպքերը, հաշվապահական ձևակերպումները, ինչպես նաև "2.5 Կանխիկի մուծման հայտարարագրերի վրա դրված ստորագրությունների ուսումնասիրություն" բաժնով կատարված ստուգման արդյունքները վերստուգող խումբը եկել է այն եզրահանգմանը, որ նշված վարկերից՝ դեպքերից մեծամասնությունում "Վարդենիս" մասնաճյուղում ֆիզիկական անձանց անուններով ձևակերպվել և համագործակցող կազմակերպությունների միջոցով կանխիկացվել են գումարներ, քանի որ "Վարդենիս" մասնաճյուղի Նախկին կառավարիչ Արմեն Բաղդասարյանի

և վարկային մասնագետ Հովհաննես Համբարձումյանի կողմից "Խաչատուր Շաբոյան" Ա/Ձ-ի և "Վասարաթ" ՍՊ ընկերության հետ համագործակցությամբ կենցաղային ապրանքների ձեռքբերման նպատակով սպառողական վարկերի տրամադրման ընթացքում բանկի ներքին իրավական ակտերով չառաջնորդվելը հանդիսացել է գործարար սովորույթ, ուստի ստուգող խմբի կարծիքով "Վարդենիս" մասնաճյուղում առկա փաստաթղթերի ստուգման արդյունքում հնարավոր չի եղել հստակ պարզել, թե նշված վարկի գումարները փաստացի ու՞մ կողմից են տնօրինվել, ովքեր են իրականացրել նշված վարկերի ընթացիկ մարումները (հատոր 1-ին գ. թ. 138-249):

"Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղից 2010 թվականի մարտի 18-ին առգրավված թվով 198 կեղծ վարկային գործերով, մասնավորապես Գագիկ Վիկտորի Բարսեղյանի, Անահիտ Սեյրանի Բարսեղյանի, Նունե Գավիթի Բարսեղյանի, Կարո Վրեժի Բուդոյանի, Ալվարդ Սերյոժայի Բեժանյանի, Արշակ Արտեմի Ղաբաոյանի, Մայախան Հովհաննեսի Ղարբինյանի, Հովիկ Աեռնիկի Դավթյանի, Սարգիս Հայկի Դավթյանի, Արման Արամի Դաշյանի, Գեորգի Արայի Դուլյանի, Ալբերտ Նիկոլայի Գարնարատյանի, Գրիմիկ Ալբերտի Գասպարյանի, Հովհաննես Օնիկի Գասպարյանի, Արմեն Իշխանի Գալստյանի, Աշոտ Գարեգինի Գալեչյանի, Ալլա Ալֆրեդի Գրիգորյանի, Ալետա ժորայի Գրիգորյանի, Հմայակ Սոսի Գրիգորյանի, Ռաֆայել Բաբկենի Գրիգորյանի, Աշոտ Ավետիսի Գևորգյանի, Վասիլի Սարգի Գյուլումյանի, Ռուզաննա Ռոմիկի Աբգարյանի, Նառա Արգիշտի Աբգարյանի, Աստղիկ կուդվիկի Աբրահամյանի, Հարություն Ալբերտի Ազարյանի, Նաիրա Գագիկի Ազարյանի, Ստեփան Սերյոժայի Արզոյանի, Հայկ ժորիկի Արշակյանի, Ահարոն Մանուկի Ալբերտյանի, Ալլա Ռոլանդի Ալոյանի, Արմեն Իվանի Ալլահվերդյանի, Ռաֆիկ Էդիկի Ավագյանի, Ռայա Նիկոլայի Ավանեսյանի, Թամարա Հարությունի Ավետիսյանի, Սուրիկ Խաչատուրի Ավետիսյանի, Կարեն Ռազմիկի Աղաբեկյանի, Արմեն Սերգեյի Աղաջանյանի, Անյուտա Վելիկի Աղաջանյանի, Գայանե Ափիցարյանի, Սվետիկ Միխաիլի Ամյանի, Սարգիս Պավելի Անտոնյանի, Վարուժան Խաչիկի Թադևոսյանի, Վարուժան Խաչիկի Թադևոսյանի, Հասմիկ Գագիկի Թարխանյանի, Արթուր Աևոնի Չոբանյանի, Մխիթար Գագիկի Թովմասյանի, Վարդանուշ Թումասի Թումանյանի, Լենա Սերգեյի Ջումանյանի, Գագիկ Ստեփանի Պռոշյանի, Հարություն Ռոբերտի Չեպեչյանի, Սառա Հրանտի Պետրոսյանի, Տաթևիկ Ռուբիկի Պետրոսյանի, Մակիչ կուդվիկի Պետրոսյանի, Քրիստինե Ռուբիկի Պետրոսյանի, Մելանյա Ռաֆիկի Պետրոսյանի,Նորա Արամի Պետրոսյանի, Արամ Ռոբերտի

Հարությունյանի, Ռաֆայել Սարգսի Հարությունյանի, Սոս Հարությունյանի, Սոնյա Սահակի Հովակիմյանի, Էմմա Սուրիկի Հակոբյանի, Ալինա Թելմանի Հակոբյանի, Հենրիկ Արամայիսի Հակոբյանի, Սոաաննա Խաչիկի Հակոբյանի, Սմբատ Խաչիկի Հակոբյանի, Ծովինար Աշոտի Հակոբյանի, էլիզա Խաչիկի Համբարձումյանի, Արտակ Գագիկի Համբարձումյանի, Արման Գագիկի Համբարձումյանի, Անահիտ Խաչիկի Համբարձումյանի, Անուշ Ավետիքի Համբարձումյանի, Հակոբ Մնացի Հոխանյանի, Աննա Արսենի Հովհաննյանի, Ռուբեն Սարիբեկի Հովհաննյանի, Ավետիք Ֆահրադի Հովաննիսյանի, Միխայիլ Հովհաննեսի Հովհաննեսյանի, Ալեքսան Բարկենի Հունանյանի, Արմեն Գրիշայի Խաչատրյանի, Հասմիկ Աեռնիկի Խաչատրյանի, Ռազմիկ Գարեգրնի Խաչատրյանի, Գևորգ Ռազմիկի Սարգսյանի, Աղաբեկ Բաղիշի Սարգսյանի, Անահիտ Սարգիսի Սարգսյանի, Հայկարամ Գրիգորի Սարգսյանի, Հրանտ Աևոնի Սարգսյանի, Նելլի Գրիշայի Սարգսյանի, Գրիգոր Արամի Սահակյանի, էդվարդ Աշոտի Սահակյանի, էդվարդ Սարգսի Սահակյանի, Արթուր Արմենակի Սահակյանի, Արտեմ Աշոտի Սահակյանի, Արմանուշ Սերյոժայի Սահակյանի, Սարգիս Ռուցենի Սահակյանի, Մարտին Նիկոլայի Սահակյանի, Ռազմիկ Խաչատուրի Սամվելյանի, Ֆրիդոն Ասացականի Սաֆարյանի, Արշալույս Գագիկի Սիմոնյանի, Արաքսյա Վլադիմիրի Սողոմոնյանի, Գոհար Զավենի Խլոյանի, Սեդրակ Արմենի Խլոյանի, Անահիտ Վահագնի Սևոյանի, Համլետ Սուրենի Վարդանյանի, Սևակ Վանիկի Վարդանյանի, Կարեն Ապրեսի Վարդանյանի, Գագիկ Սեդրակի Կարապետյանի, Գառնիկ Սեդրակի Կարապետյանի, Գևորգ Աշոտի Կարապետյանի, Սևակ Գևորգի Կարապետյանի, Սամվել ժիրայրի Կարճիկյանի, Նվեր Աիպարիտի Կոլոտյանի, Նելսոն Անանիկի Կոլոտյանի, Գոռ Հրանտի Տոնոյանի, Արմենուհի Շիրատի Տերյանի, Վլադիմիր Գրիգորի Տերյանի, Հայկ Սերյոժայի Մադոյանի, Գայանե Թորգոմի Ղազարյանի, Զենաֆերա Ռաֆիկի Ղարիբյանի, Արտակ Սոսի Ղարիբյանի, Ատոմ Անդրանիկի Ղարիբյանի, Թամարա Հարությունի Ղարիբյանի, Աավուրիկ Բարեղամի Ղարիբյանի, Սոխակ Սամվելի Ղարիբյանի, Ռուբեն Հայկի Ղարիբյանի, Աենդրուշ Ռուբենի Ղարիբյանի, Վերգինե Արշակի Ղարիբյանի, Միեր Սերյոժայի Ղարիբյանի, Նինա Անդրանիկի Ղարիբյանի, Անուշ Աևոնի Մարտիրոսյանի, Հովիկ Մանասի Մանուկյանի, Գայանե Աավրենտի Մանուկյանի, Արսեն Գառնիկի Մանուկյանի, Արամ Աբրահամի Միրզոյանի, Կարինե Ալեքսանդրի Միրզոյանի, Ռազմիկ Գեորգիի Միսակյանի, Զարիկ Ռաֆիկի Մինասյանի, էդգար Անդրանիկի Մինասյանի, Արծրուն Փայլակի Մինասյանի, Արեգնազ Արամի Մինասյանի, Սամվել Սուրիկի Մինասյանի, Լուսինե Կամոյի Մինասյանի,

Մանվել կովայի Սինասյանի, Շահում Սամվելի Մինասյանի, Քնարիկ Մարտունի Մովսիսյանի, Արթուր Բաղիշի Մովսիսյանի, Գեղեցիկ Արտաշի Մուրադյանի, Աևոն Կարենի Երանոսյանի, Նարինե Աևոնի Երանոսյանի, Կարինե Սամվելի Ախոյանի, Վիկտոր Մարտիկի Մխեյանի, Արմինե Սերյոժայի Մկրտչյանի, Սամվել Վեմիրի Մկրտչյանի, Ստելլա Վահրամի Մկրտչյանի, Վարդուշ Ավետիքի Մկրտչյանի, Նաիրա Կարենի Մկրտչյանի, Սպարտակ Մկրտչի Մելիքյանի, Սվետա Հովհաննեսի Մելիքյանի, Աևոն Գարեգրնի Մելիքյանի, Եվգենիա Գենադիի Մելքումովայի, Միխաիլ Գենադիի Մելքումովինի, Սամվել Միերի Մնացականյանի, Արման Արամի Մնացյանի, Արմինե Գևորգի Շաբոյանի, Իշխանուհի Թորոսի Շաբոյանի, Վահե Սպարտակի Շաբոյանի, Գոհարիկ Զարմիկի Շիրվանյանի, Արթուր Գենադիի Շելունցի, ժորա Աբրահամի Նազարյանի, Արկադի Սուրենի Նարինյանի, Աղունիկ Հրաչիկի Նալբանդյանի, Վահագն Սամսոնի Նալբանդյանի, Մարիամ Բարկենի Օհանյանի, Գեորգի Արամի Օսիպովի, Ալվարդ Ղազարի Առաքելյանի, Արարատ Սերգեյի Երիցյանի, Գարիկ Ռազմիկի Գրիգորյանի, Գրետա Ալեքսանի Հովհանյանի, Շիրազ Աշոտի Սեսմանուկյանի, Խաչատուր Աևոնի Մանուկյանի, Սվետա Հովհաննեսի Մելիքյանի, Արփիկ Լիպարիտի Եղեյանի, Սաթենիկ Հուսիկի Շաբոյանի, Ավետիք Ռուբենի Զարոյանի, Հայկ Հրաչիկի Ադիբեկյանի, Ալինա Համլետի Սարգսյանի, Ռուզաննա Ազիզի Մանուկյանի, Սամվել Սերգեյի Նալթակյանի, Արթուր Միշայի Ասատրյանի, Գեղեցիկ Մամիկոնի Հակոբյանի, Արմեն Մեսրոպի Կյուրեղյանի, Գագիկ Սերյոժայի Միերյանի, Հովսեփ Գևորգի Խաչատրյանի, Տիրուհի Հարությունի Մկրտչյանի և Մառլենա Ադիբեգի Գրիգորյանի անուններով լրացված (հատոր 3-րդ գ. թ. 227-229, 254)։ "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության "Վարդենիս" մասնաճյուղից 2010 թվականի մարտի 18-ին առգրավված "Խաչատուր Շաբոյան" Ա/Ձ տնօրեն Խաչատուր Շաբոյանի կողմից բանկից գումարներ կանխիկացնելու վերաբերյալ թիվ 9950 69 , 995072 , 995070, 378940, 378944, 995056, 995073, 995071, 378950, 995059, 995065, 378947, 378942, 995063, 995062, 378949, 378946, 378945, 995052, 995066, 995053, 995055, 995061, 378948, 995068, 378941 և 995058 անդորրագրերը, ինչպես նաև "Վասարաթ" ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանի կողմից բանկից գումարներ կանխիկացնելու վերաբերյալ թիվ 995884, 995881, 995885, 996155, 995883, 995877, 996157, 996152, 843340, 843343, 843341, 996171, 843348, 996153, 843349, 843346, 995879, 996158, 996151, 843344, 996166, 843338, 995878, 843345, 996168, 996174, 996172, 996173, 843350, 996160, 996156, 843347, 996170, 995876,

843339, 996159, 996161, 996169, 996154, 995882, 995886, 995880 և 996175 անդորրագրերով (հատոր 3-րդ գ. թ. 227-229, 254):
Այսպիսով, դատարանն ապացուցված համարեց, որ ամբաստանյալներ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանը և Խաչատուրի Ռուբենի Շաբոյանը կատարել են հանցավոր արարքներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ 1-ին մասով, որոնցով և պետք է քրեական պատասխանատվության ու պատժի ենթարկվեն:
Ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես նրա կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող այն հանգամանքները, որ բնութագրվում է դրական, խնամքին ունի չորս անձ, այդ թվում մինչև տասնչորս տարեկան երկու երեխա: Ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրում:

Ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես նրա կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող այն հանգամանքները, որ բնութագրվում է դրական, խնամքին ունի հինգ անձ, այդ թվում մինչև տասնչորս տարեկան երկու երեխա, որոնցից Դավիթ Խաչատուրի Շաբոյանը տառապում է պերիոդիկ հիվանդությամբ, երկրորդ կարգի հաշմանդամ է, կինը չի աշխատում, մայրը և հայրը երկրորդ կարգի հաշմանդամ են: Ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրում:
Դատարանը գտնում է, որ իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերը պետք է պահել քրեական գործի հետ:
Անդրադառնալով քաղաքացիական հայցին դատարանը գտնում է, որ այն պետք է բավարարել մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ. Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Դատաքննությամբ հաստավեց, որ "Արդշինինվեստբանկ" փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ Ընկերություն) պատճառված վնասի չվերականգնված գումարի չափը կազմում է 50.593.545 (հիսուն միլիոն հինգ հարյուր իննսուներեք հազար

հինգ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ, որից 16.913.353 (տասնվեց միլիոն ինը հարյուր տասներեք հազար երեք հարյուր հիսուներեք) ՀՀ դրամի վնասը պատճառվել է Արմեն Բաղդասարյանի, Հովհաննես Համբարձումյանի և Խաչատուր Շաբոյանի հանցավոր գործողությունների հետևանքով, իսկ 33.680.192 (երեսուներեք միլիոն վեց հարյուր ութանասուն հազար մեկ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամի վնասը Արմեն Բաղդասարյանի, Հովհաննես Համբարձումյանի և "Վասարաթ" ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանի հանցավոր գործողությունների հետևանքով: Նկատի ունենալով վերը նշված փաստական հանգամանքները, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ Հովհաննես Համբարձումյանը և "Վասարաթ" ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանը գտնվում են հետախուզման մեջ, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանից հօգուտ Ընկերության պետք է բռնագանձվի 16.864.515 (տասնվեց միլիոն ութ հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր տասնհինգ) « դրամ, որից 8.950.579 (ութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունինը) « դրամը, որպես հիմնական պարտքի գումար, 7.913.936 (յոթ միլիոն ինը հարյուր տասներեք հազար ինը հարյուր երեսունվեց) « դրամը հաշվարկված տոկոսի և տուժանքի գումար:
Դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Խաչատուր Շաբոյանից հօգուտ Ընկերության պետք է բռնագանձվի 5.637.784 (հինգ միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր ութանասունչորս) ՀՀ դրամ, որից 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր ութանասուն) « դրամը, որպես հիմնական պարտքի գումար, 2.671.504 (երկու միլիոն վեց հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր չորս) ՀՀ դրամը հաշվարկված տոկոսի և տուժանքի գումար: Հետևաբար, դատարանը գտնում է, որ գումարի բռնագանձման մնացած մասով հայցապահանջը պետք է թողնել առանց քննության մինչև Հովհաննես Համբարձումյանի և "Վասարաթ" ՍՊ ընկերության տնօրեն Հովիկ Խաչատրյանի հայտնաբերելն ու նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը, ինչպես նաև առանց քննության պետք է թողնել Ընկերության հայապահանջի 2-րդ ու 3-րդ կետերը:
Հաշվի առնելով Արմեն Բաղդասարյանի և Խաչատուր Շաբոյանի ուղղումն ու սոցիալական արդարության վերականգնումը, ինչպես նաև նոր հանցագործությունների կատարման կանխումը վերջիններիս կողմից հնարավոր է միայն նրանց որոշակի ժամկետով ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով, հասարակությունից մեկուսացնելու ազատազրկման դատապարտելու միջոցով:

ՀՀ քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի *առաջացած* կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից:

Հետևաբար, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արմեն Բաղդասարյանից, որպես գույքի բռնագրավում հօգուտ ՀՀ պետական բյուջեի պետք է բռնագրավվի 8.950.579 (ութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունինը) « դրամի գույքի, իսկ Խաչատուր Շաբոյանից 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր ութանասուն) **ՀՀ** դրամի գույք:

Միաժամանակ դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Արմեն Բաղդասարյանի և Խաչատուր Շաբոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը, պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Ղեկավարվելով « քրեական դատավարության օրենսգրքի 357-360-րդ հոդվածներով դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Արմեն Ռոբերտի Բաղդասարյանին մեղավոր ճանաչել « քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Արմեն Ռոբերտի Բաղդասարյանին « քրեական օրենսգրքի 179-րդ հեղվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

« քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 7 (յոթ) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի 8.950.579 (ութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունինը) « դրամի բռնագրավմամբ:

« քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով վերջնական պատիժ սահմանել ազատազրկում 9 (ինը) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի 8.950.579 (ութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունինը) « դրամի բռնագրավմամբ:

Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը թողնել ամփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Պատժի կրման սկիզբը հաշվել 2010 թվականի մարտի 21-ից: Պատիժը պետք է կրի « ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում:
2. Խաչատուր Ռուբենի Շաբոյանին մեղավոր ճանաչել « քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Խաչատուր Ռուբենի Շաբոյանին « քրեական օրենսգրքի 179-րդ հեղվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի:
« քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 6 (վեց) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր ութանասուն) « դրամի բռնագրավմամբ:

« քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նշանակված պատիժները մասնակի գումարելու միջոցով վերջնական պատիժ սահմանել ազատազրկում 7 (յոթ) տարի ժամկետով՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր ութանասուն) « դրամի բռնագրավմամբ:

Խաչատուր Ռուբենի Շաբոյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը թողնել ամփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Պատժի կրման սկիզբը հաշվել 2010 թվականի հունիսի 27-ից: Պատիժը պետք է կրի « ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկում: Արմեն Ռոբերտի Բաղդասարյանից հօգուտ "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության բռնագանձել 16.864.515 (տասնվեց միլիոն ութ հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր տասնհինգ) « դրամ, որից 8.950.579 (ութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար հինգ հարյուր յոթանասունինը) « դրամը, որպես հիմնական պարտքի գումար, 7.913.936 (յոթ միլիոն ինը հարյուր տասներեք հազար

ինը հարյուր երեսունվեց) « դրամը հաշվարկված տոկոսի և տուժանքի գումար:

Խաչատուր Ռուբենի Շաբոյանից հօգուտ "Արդշինինվեստբանկ" ՓԲ ընկերության բռնագանձել 5.637.784 (հինգ միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր ութանասունչորս) « դրամ, որից 2.966.280 (երկու միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր ութանասուն) ՀՀ դրամը, որպես հիմնական պարտքի գումար, 2.671.504 (երկու միլիոն վեց հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր չորս) « դրամը հաշվարկված տոկոսի և տուժանքի գումար:

Քաղաքացիական հայցը մնացած մասով թողնել առանց քննության: Իրեղեն ապացույց ճանաչված փաստաթղթերը պահել քրեական գործի հետ: Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ մեկամսյա ժամկետում

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ